Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

58, 59, 60, 61,
62, 63, 64, 65,
66, 67, 68, 69, 70,
71, 72, 73, 74, 75

2
L-85

2010

ԼՍԱՐԱՆ

ՀՈԳԵՇՈՒՀ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

ՏՕՆ

ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ

Տպագրեալ հրամանաւ Վեհափառ Տեառն

ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՅ Դ,

Աստուածընտիր Եպիսկոպոսի Ամենայն Հայոց.

Ի Կ. ՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ԱՐԱՄԵԱՆ

1870-ՌՅԺԹ

« Եթէ կրնաս ձայնդ բարձրացրնել, խօսէ : Եթէ գիրք միայն թողուն քովդ, գրէ : Փողոցին մէջ քարի մը վրայ կանգնած՝ քարոզէ, եթէ կրնաս. եթէ հրապարակական կեանքը փակ է, տանդ մէջ բան սովրեցուր : Եթէ ձայն չունիս, օրինակ տալու կարողութիւն ունիս : Այս ոչ առաքինութիւն է, ոչ կարգէ դուրս գործողութիւն. այլ պարտք է՝ պարզ ու յստակ : Աշխարհիս մէջ Աստուծոյ կողմանէ այն եղիր, ինչ որ է բժիշկը մարմնոյ հիւանդութեանց համար. բժիշկը պարտական է հասնելու ամենայն ցաւագարաց, եւ դու պիտի հասնիս ամենայն տգիտաց : Քու Ստեղծողդ կեանցդ համարը պիտի պահանջէ քեզնէ : Ցոյսդ մի՛ դներ բացասական առաքինութեան վրայ, որ միայն ուրիշի վնաս չրնելն է. քեզի օրէնք տրուած է որ հասարակաց գործոյն համար աշխատիս, եղբարքդ սիրես, լուսաւորես, մխիթարես, ազատես մոլութենէ ու մոլորութենէ, եւ առ Աստուած առաջնորդես :

Կեանքն ալ այս է, մարդն ալ այս :

ԺԻՒԼ ՍԻՄՈՆ

(Իմաստասէր եւ Քաղաքագէտ գաղղիացի :)

ԼՍԱՐԱՆ

ՀՈԳԵՇԱՀ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ՏՕՆ

ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Տպագրեալ հրամանաւ Վեհափառ Տեառն

ՅԵՍԱՒՆ ԳԷՈՐԳԱՑ Դ,

Աստուածընտիր Կաթողիկոսի Ամենայն Հայոց.

Ի Կ. ՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ճ. ԱՐԱՄԵԱՆ

1870-ՌՃԺԹ

28418-Կ.Հ.

Կ. ՊՕԼԻՍ ՏՊԱԳՐ. ԱՐԱՄԵԱՆ

Զգուշացնիր Փողոց, Յակոբեան-Խան, Թիւ 4, 6.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
11408-57

5.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՏՕՆ

ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

ՈՐ Է

ԾՆՈՒՆԴ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

«Անաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանդ. զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է օծեալ Տէր, ի քաղաքի Դաւթի.» ՂՈՒԿ. Բ. 10:

ՔՐԻՍՏՈՍԻ Տեառն մերոյ հրաշափառ Ծնընդեան և Մկրտութեան օրը յիրաւի աւետաւոր օր մի է ամենայն Քրիստոնէից համար, և ամենամեծ ուրախութեան օր. վասն զի այսօր Աստուած՝ Աբարիչն երկնի և երկրի՝ աքանչելի խորհրդով աշխարհք եկաւ կուսական ծննդեամբ, մեզի նման մարդ, միանդամայն և Աստուած, որպէս զի փրկէ զմեզ ի մեղաց և ի դերութենէ սատանայի: Ուստի և մեր Սուրբ Եկեղեցին մեծ ուրախութեամբ կնշանաւորէ զմեզ այսօրուան ծանր արժանաւոր ցնծութեամբ կատարելու, և կասէ Շարականին խօսքերովը. «Զ'ի Կուսէն մարմնացեալ Բանն՝ եկայք ժո-

ղովուրդք՝ ընդ հովիւսն բարեբանեսցուք, և ընդ մոգուցն երկրպագեսցուք, ընդ երկնային զօրսն երգեսցուք Փառք ի բարձունս Աստուծոյ։» — Եկէք, ով հաւատացեալ ժողովուրդներ, հովիւներուն հետ մէկտեղ օրհնեմք ու գովեմք զԲանն Աստուած որ մարմին առեր է ի Սուրբ Կուսէն. մոգերուն հետ մէկտեղ երկրպագութիւն անենք իրեն, և երկնային զօրաց՝ այսինքն բոլոր Հրեշտակաց հետ մէկտեղ երգեմք նոցա այսօր երգած երգը, Փառք ի բարձունս Աստուծոյ։ — Երանի՜ այն քրիստոնէին որ այս անպատմելի ուրախութեան և ճշմարիտ ջերմեռանդութեան մասնակից լինի այսօր, և սասր հոգևոր պտուղները՝ այսինքն շնորհքները վայելէ, որ են հաշտութիւն ընդ Աստուծոյ, խաղաղութիւն սրրոի և հոգւոյ, սէր առ մարդիկ և ջանք նմանող լինելոյ մարմնացեալ Փրկչին մերոյ։

Տեսնեմք թէ ինչպէս ու ինչ պարագաներով եղաւ այսօր Քրիստոսի Տեառն մերոյ Ծնունդն ու Մկրտութիւնը, և թէ Սուրբ Եկեղեցին ինչ կերպով կկատարէ ամէն տարի այս հրաշափառ տօնը։

Օգոստոս Կայսեր ժամանակը Հռովմայեցիք Եւրոպայի, Ասիոյ ու Աֆրիկէի շատ տեղերուն տիրապետած էին. ուստի Հրէաստանն ալ նոցա իշխանութեան տակն էր։ Հրաման եղաւ Կայսեր կողմանէ որ տէրութեան բոլոր երկիրներուն բնակիչները համրուին ու դիր անցուին, և այս գործողութիւնը դիւրաւ կատարուելու համար՝ ամէն մարդ իրեն կամ իւր նախնեացը ծնած քաղաքն երթայ ու հոն գրուի։ Սուրբն Յոսէփ Դաւիթ մարդարէին ցեղէն ու Բեթղեհէմ քաղաքէն էր, բայց այն միջոցին կենակէր Նազարէթ քաղաքը՝ որ Գալիլեա ասուած նահանգին մէջ էր. պէտք եղաւ որ առնու իւր

խօսեցեալը, այսինքն զամենասուրբ Կոյսն, և երթայ Բեթղեհէմ։ Եւ որովհետև այն աշխարհագրին պատճառաւը ուրիշ շատ մարդիկ ևս եկած լցուած էին քաղաքին տներն ու իջևանները, քաղաքէն դուրս այրի մը մէջ քաշուեցան, ուր հովիւները և ուրիշ դեղացիներ իրենց անասունները կպահէին։ Սրբոյ Կուսին ծնանելու օրերն հասած լինելով, այն տեղն եղաւ Քրիստոսի Տեառն մերոյ հրաշալի Ծնունդը։ Ամենօրհնեալ մայրը խանձարուրի մէջ պատեց նորածին մանուկն ու հանդչեցուց դինքը մսուրին մէջ, այսինքն կենդանեաց խոտ ուտելու տեղը։ Որով այն խեղճուկ այրը կամ գոմը աւելի հոյակապ՝ աւելի փառաւոր եղաւ քան թէ կայսերաց և թագաւորաց ոսկեղօծ պալատները. այն աղքատիկ խանձարուրքը աւելի շքեղաշուք եղան քան թէ ծիրանաձին թագաւորաղանց ազնիւ ու փափուկ բեհեղները, և այն խոնարհ ու անշուք մսուրը աւելի ահաւոր ու պատուաւոր՝ քան թէ թագաւորական դահոյքն ու աթոռները. վասն զի Տէրն տերանց և Թագաւորն թագաւորաց էր անոնց մէջ հանդչողը մարդկային բնութեամբը։

Այն այրին մօտ տեղերը դաշտի մէջ հովիւներ կային, որ գիշերները դուրսը կեցած՝ պահպանութիւն կընէին իրենց ոչխարներուն։ Յանկարծ հրեշտակ մը երևցաւ հովիւներուն, և երկինքէն լոյս մը ծագեցաւ նոցա վրայ՝ այնպէս սաստիկ ու փառաւոր՝ որ խեղճերը մեծ վախի մէջ ընկան։ Հրեշտակը սիրտ տուաւ հովիւներուն. «Մի վախնաք, ասաց. ես անոր համար եկայ որ մեծ և ուրախալի աւետիս՝ աշքի լոյս մը տամ ձեզի. այնպիսի աւետիս մը որ բոլոր ժողովրդեան ալ ուրախութիւն պիտի պատճառէ. վասն զի այսօր այս վայրկենիս Փրկիչ մը ծընաւ ձեզի, որ Մեսիան է՝ Աստուած է, Դաւիթի մար-

դարէին քաղաքը։ Գնացէք՝ ձեր աչքովը տեսէք, ու այս նշանովս ճանչցէք որ նորածին տղան խանձարուրքով պատած ու մսուրի մէջ դրուած է»։ Հրեշտակը այս խօսքերս դեռ ըսելու վրայ էր, յանկարծ անոր չորս բոլորը երևցան անթիւ անհամար հրեշտակներ, որ ամէնքը մէկտեղ զԱստուած կփառաբանէին ու կըսէին. «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն». այսինքն՝ Փառք բարձրելոյն Աստուծոյ, որ երկրիս խաղաղութիւն պարգևեց, ու մարդ-

կային աղգին հետ հաշտուեցաւ դթութեամբ։ Այս ըսին հրեշտակներն ու դէպ ի երկինք վերացան։

Հովիւները հիացած զարմացած մնացեր էին իրենց տեսածին ու լսածին վրայ. դարձան ըսին իրարու թէ «Եկայք երթիցուք մինչև ցԲեթղեհէմ, և տեսցուք զինչ է բանս այս որ եղև, զոր Տէր ետոյց մեզ». —Եկէք երթամք մինչև Բեթղեհէմ քաղաքը, տեսնեմք թէ այս ինչ բան է որ եղեր է ու Աստուած յայտնեց մեզի։ — Եւ ասա մը ճամբայ ելան, գնացին արտորալով, և գտան զՍուրբ Կոյսն Մարիամ և զԱստուածահայրն Յովսէփ, և նորածին Փրկիչը մսուրին մէջ դրուած. իսկոյն հասկըցան

որ նորա համար էին հրեշտակներուն ըսածները. երեսի վրայ ընկան՝ երկրպագութիւն ըրին անոր իբրև ճշմարիտ Մեսիայի, Աստուծոյ փառք տալով դարձան իրենց տեղերը, և ուր որ հանդիպէին՝ կպատմէին ուրախութեամբ իրենց տեսածն ու լսածները, այնպէս որ ամէն լսողներն ալ կզարմանային։ Գուցէ իրենց զարմանքին մէկ պատճառն ալ այս էր որ Աստուած ինչու պարզամիտ ու աղքատ հովուաց յայտնեց իւր մեծ խորհուրդը, և ոչ աշխարհիս իմաստուններուն ու մեծամեծներուն. խելքերնին չէր հասներ Պօղոս առաքելոյն մեղի բացատրած ճշմարտութեանը թէ «Աստուած աշխարհիս յիմար անուանած մարդիկն ընտրած է միշտ, որ նոցա ձեռքովը ամաչցնէ ինքնահաւան իմաստունները. աշխարհիս երեսը տկար ու խեղճ համարուած մարդիկն ընտրեր է՝ որ զօրաւորներն ամաչցնէ. մէկ խօսքով, մարդկանց ոչինչի տեղ դրած անձինքն ընտրած է՝ որպէս զի իրենք զիրենք բանի տեղ դնողները ջնջէ վերցնէ։»

Բայց Աստուած կամեցաւ որ աշխարհիս իմաստուններն ու մեծամեծներն ալ պատճառ չունենան ժժգոհելու և յուսահատելու Աստուծոյ ողորմութենէն. այլ դիտնան որ իրենց ձեռքն է յաւիտենական փրկութեան հանիլը՝ եթէ իմաստութեան հետ ունենան ճշմարիտ խոնարհութիւն, պարզմտութիւն ու համբերութիւն. հարստութեան հետ՝ հոգւով աղքատութիւն. մեծութեան և իշխանութեան հետ՝ հեզութիւն ու արդարութիւն. ինչպէս որ յայտնի է նաև առաջիկայ պատմութենէն։

Հրէաստանի արևելեան երկիրներէն մէկուն մէջ երեք իմաստուն աստղաբաշխներ կային՝ որ անուանի էին իրենց իշխանութեամբը՝ մէկմէկ փոքրիկ թագաւորներու

պէս. իրենք մոգ կառուէին, և ինչպէս որ աւանդութիւն է՝ անունները էին Մելգոն, Գասպար և Բաղտասար։ Սոքա իրենց առուծածապաշտ նախնիքներէն լսած էին անշուշտ որդւոց որդի՝ թէ առեղով մարդկային ազգիս Փրկիչ մը պիտի գայ աշխարհք՝ Հրէից ազգէն։ Քրիստոսի Ծննդեան օրերը նորանշան ապաղ մը տեսան երկնքին երեսը. հասկցան, — գուցէ նոսա Աստուածային յայտնութեամբ, — թէ այն լուսավոյլ աստղը սովորական երկնային մարմիններէն մէկը չէ. տեսան որ ուրիշ աստղերէն ցած է, և դէպ ի Հրէաստանի վրայ կը շարժի. ճանապարհ եղան՝ եկան Երուսաղէմ, և ակռան մէկուն մէկուին հարցընել թէ Հրէից նորածին թագաւորն ուր տեղ է. Մէք նորա աստղը տեսանք երբոր արևելքն էինք, ու եկանք որ երկրպագութիւն ընենք իրեն։

Այն ժամանակները Հրէից թագաւոր Հերովդէսն էր. — 72 տարեկան՝ անդութ մարդ. և որովհետև ինքը ազգաւ Հրեայ չէր, այլ Եդոմիայեցի այլազգի էր՝ Ասկաղոն քաղաքը ծնած, Հրէից կրօնքն ընդունած, ու Հրոմիայեցւոց պաշտպանութեամբը՝ Հրէաստանի թագաւորութիւնը Մակաբայեցւոց ցեղին ձեռքէն յափշտակած. — երբոր լսեց մոգերուն ըսած խօսքը թէ նոր թագաւոր մը ծներ է Հրէից, իսկոյն կասկածի գնաց որ նա Մեսիան պէտք է լինի, մեծ շփոթութեան և տագնապի մէջ ընկաւ. բոլոր Երուսաղեմացիք ալ երբոր լսեցին՝ տակն ու վրայ եղան։

Հերովդէս իւր պալատը ժողվեց իսկոյն բոլոր Հրէից քահանայապետներն ու կարդացողները, հարցուց անոնց թէ Մեսիան ուր պիտի ծնանի։ Նոքա պատասխան տուին թէ Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքը պէտք է ծնանի, որովհետև Միքիա մարգարէն այսպէս գրած է.

«Եւ դու Բեթղեհեմ՝ երկիր Յուդայ, ոչինչ կրասեր ես յիշխանս Յուդայ. ի քէն ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ»։ այսինքն՝ Իսկ դուն՝ ով Բեթղեհեմ՝ Յուդայի երկիրը, դուն Հրէաստանի դրբ-խաւոր քաղաքներուն մէջ փոքրկութիւն մը չունիս. վասն զի քեզնէ իշխան մը պիտի ելնէ որ պիտի հովուէ իմ Իսրայէլ ժողովուրդս։

Այս որ լսեց Հերովդէս, ծածուկ կանչեց մոգերն ու հարցուց իմացաւ թէ ո՞ր ժամանակէն սկսան տեսնել նոքա այն աստղը. յետոյ ասաց որ երթան Բեթղեհեմ քաղաքին մէջ փնտռեն, և կեղծաւորութեամբ վրայ բերաւ թէ «Եւ յորժամ գտանիցէք՝ ապդ արասջիք ինձ, զի և ես եկեալ երկիրպագիս նմա»։ — Երբոր գտնէք այն տղան՝ իմաց տուէք ինծի որ ես ալ երթամ երկրպագութիւն ընեմ իրեն։

Մոգերը թագաւորին առջևէն ելան որ երթան դէպ ի Բեթղեհեմ, անտարակոյս զարմանալով որ ոչ զինուորներ տուաւ նա իրենց օգնական և ոչ ճամբայ ցուցնող առաջնորդներ. բայց իրենց յոյսը Աստուծոյ վրայ էր, և Աստուած դարձեալ առաջնորդեց նոցա։ Այն աստղն որ տեսեր էին իրենց երկրին մէջ եղած ժամանակնին, նորէն երևցաւ ու սկսաւ առջևներէն երթալ, մինչև որ եկաւ դադրեցաւ նորածին Փրկչին եղած տեղւոյն վրայ։ Անպատմելի եղաւ մոգերուն ուրախութիւնը՝ երբոր տեսան իրենց նախածանօթ աստղը. մտան այն տունը, տեսան զթագաւորն փառաց աղայական կերպի մէջ, և աւելի վեր ճանչնալով այն տղան իւր խոնարհութի և հեզութիւն մօրը դիրքը, քան թէ սնոտի պերճութեամբ դառնալ Հերովդէսը նորա թագաւորական ոսկեզօծ ամբառոյն վրայ, ընկան երեսի վրայ ու երկրպագութիւն

ջրին Փրկչին. անով դոհ չեղան, բացին իրենց հարբուտութեան դանձը, և ընծայեցին իրեն խարհրդաւոր ընծաներ՝ ոսկի, կնդրուկ և զմուռս. ոսկին՝ իբրև թագաւորի, կնդրուկը՝ իբրև Աստուծոյ, և զմուռսը՝ իբրև Փրկչի ազգի մարդկան՝ չարչարանաց և մահուամբ։

Միաք ունէին երանելի մոգերը նորէն դառնալու Երուսաղէմ, ու պատմելու քարոզելու Հերովդէսին և ուրիշներուն իրենց տեսածներն ու հաւատացածները. բայց տեսիլքով պատուիրեց նոցա Աստուած որ չդառնան Հերովդէսին քով. ուստի ուրիշ ճամբով իրենց երկիրը գնացին։

Իսկ Հերովդէս տեսնելով որ մոգերը իրենց խոստմունքը չպահեցին, խնայաւ որ հասկրցեր են իւր չար դիտաւորութիւնը, որ էր զՅիսուս մանուկը մեռցընել. և փոխանակ զդատանալու՝ աւելի կատղեցաւ. մարդիկ զրկեց Բեթղեհէմ և շրջակայ տեղերն ու որքան մանր տղաք որ կային երկու տարեկանէ վար՝ ամէնքն ալ թրէ անցընել տուաւ. որով այն անմեղ մանկունքը եղան առաջին վկայք և նահատակք մանկացեալ Փրկչին, թըռան առ Աստուած և կրաբեխոսեն առ նա վասն ամենայն հաւատացելոց։

Յայտնի չէ թէ Քրիստոսի Տեառն մերոյ Ծննդենէն քանի օր ետքը եկան հասան մոգերը Երուսաղէմ, և անկէց Բեթղեհէմ։ Սուրբ Աւետարանին խօսքերէն այնպէս կերևի որ մոգերը Փրկչին Ծննդենէն դոնէ ամիսներով առաջ տեսած են աստղը. վասն զի Հերովդէս Բեթղեհեմի անմեղ մանկունքը ջարդել տուաւ՝ կասէ աւետարանը «Ըստ ժամանակին զոր ստուգեաց ի մոգուցն». այսինքն՝ Մոգերէն խնայած ժամանակին նայելով՝ երկու տարեկանէ վար եղած տղայքը ջարդել

տուաւ։ Բայց շատ կարելի է որ նոքա հասած լինին նոյն իսկ Քրիստոսի Ծննդեան օրերը. ուստի և հովիւներուն պէս Բեթղեհեմի այրին մէջ գտան դեռ զՅիսուս, և հոն ըրին իրենց երկրպագութիւնը, և ոչ թէ այրէն դուրս՝ ուրիշ տան մէջ. և 13 կամ 20 օր ետքը, ինչպէս որ ոմանք կարծիք կընեն, և կըսեն թէ հովիւներուն երկրպագութիւնը մոգերուն դալէն օրերով առաջ եղած է։ Անոր համար մեր Սուրբ Եկեղեցին Քրիստոսի Ծննդեան օրը կկատարէ թէ հովիւներուն և թէ մոգերուն երկրպագութեան յիշատակը, և Շարականին մէջ շատ անդամ յայտնի խօսքերով ի միասին կյիշատակուին մոգերուն ու հովիւներուն երկրպագութիւնները։

Նոյն պատճառաւ այս տօնը կատուի Աստուածայայտնութիւն կամ պարզապէս Յայտնութիւն, որովհետև այսօր յայտնուեցաւ Աստուած մարմնով՝ հովիւներուն ու մոգերուն. յայտնուեցաւ նաև ի ձեռն Յովհաննու Մկրտչի՝ վկայութեամբ Հօր Աստուծոյ և Հոգւոյն սրբոյ, այսօր իսկ մկրտուելով Յորդանան գետին մէջ։

Գիտնալու արժանի բան մի է, Քրիստոսասէր ունկընդիրք, որ հին տաճարը ամենայն եկեղեցիք քրիստոնէից՝ մեր եկեղեցւոյն պէս՝ Քրիստոսի Սուրբ Ծնունդն ու Մկրտութիւնը Յունուարի 6 ին կկատարէին, և տօնին անունը Աստուածայայտնութիւն յունարէն Թէօֆանիա կամ Յայտնութիւն (Էփիֆանիա) կանուանէին։ Զորրորդ դարուն ետքերը Լատինացիք զանազան պատճառներով որոշեցին որ Քրիստոսի Ծնունդը՝ յիշատակաւ երկրպագութեան հովուաց՝ տօնեն Դեկտեմբերի 25 ին, և առաստիրեք օր ետքը՝ այսինքն Յունուարի 6 ին տօնեն Յայտնութիւնը՝ յիշատակաւ երկրպագութեան մոգուց և Մկրտութեան Քրիստոսի ի Յորդանան։ Յետ ժամանա-

կայ Լատինայում սովորութեանը հետևեցաւ նաև Յունաց Եկեղեցին. իսկ մերը միշտ անխախտ պահեց հին սովորութիւնը։ Եւ թէպէտ այս պատճառաւ ոչ սակաւ վէճ ու դժտութիւն ունեցեր են օտարները մեր ազգին հետ, բայց զուր տեղը. դուցէ չմտածելով որ Հայաստանեայց Եկեղեցւոյ ըրածը ոչ թէ նորաձևութիւն է, այլ նախնի առաքելական սովորութեան անփոփոխ պահպանութիւն. եւ թէ Քրիստոսի Տեառն՝ մերոյ Ծննդեան ու Մկրտութեան հաւատալը անհրաժեշտ պարտք է արդարև ամենայն քրիստոնէից, և անոնց տարեկան յիշատակը տօնական հանդիսիւ կատարելը՝ ամենայն կերպով պատշաճ եւ վայելուչ և օգտակար, բայց որովհետև Սուրբ Աւետարանը հարկաւոր ճանչցած չէ մեզի իմացընել՝ թէ ճիշդ տարւոյն որ օրը հանդիպած են այն տօնները, ուստի և Եկեղեցին չը պահանջեր որ անպատճառ ամենայն քրիստոնեայք նոյն օրը կատարեն այս կամ այն տօնը։ Թէ Աստուած և թէ Սուրբ Եկեղեցին ի՞նչ կպահանջեն ամենայն իրաւամբ, եթէ ոչ այս, որ քրիստոնեայ ազգերը՝ իւրաքանչիւրը իւր սեպհական լեզուովն ու արարողութեամբը՝ մեծ ջերմեռանդութեամբ կատարեն այսպիսի հրաշափառ տօները, և իրենց ջերմեռանդութիւնը գործով ցուցընեն՝ քրիստոնէական սիրով ու նուրոյամնութեամբ վարուելով իրարու հետ. այս հոգւով ու մտքով երգեն այսօրուան օրս հրեշտակային խորհրդաւոր փառաբանութիւնը. «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։»

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՍԻ

—

ԿՄՆԱՑ որ քանի մը խօսք ալ ասեմք այսօրուան տօնին երկրորդ մասին վրայ, որ է Մկրտութիւն Քրիստոսի։

Սուրբ Աւետարանը յայտնապէս կասէ թէ Քրիստոս Տէրն մեր երեսուն տարեկան որ եղաւ՝ դնաց Յորդանան գետը որ մկրտուի Յովհաննու Մկրտչի ձեռքովը։ Հարք և Վարդապետք Եկեղեցւոյ ասկից առնելով, դուցէ և առաքելական աւանդութեամբ, կհամարին՝ թէ Յիսուսի Մկրտութիւնն ալ հանդիպած է Ծննդեանը տարեդարձին. և որովհետև Քրիստոսի Աստուածութիւնը Մկրտութեանը ժամանակն ալ յայտնուեցաւ ազգի մարդկան, վայելչապէս կկատարուի նաև Մկրտութեան յիշատակը՝ Աստուածայայտնութիւն կամ Յայտնութիւն կոչուած տօնիս հետ մէկ օր։ Տեսնենք այժմ Քրիստոսի Տեառն մերոյ Մկրտութեան պատմութիւնը։

Յովհաննէս Մկրտիչ ի մանկութենէ անապատին մէջ մեծնալով սրբութեամբ, հոն կեցած էր ճգնաւորական վարքով մինչև իւր կենաց երեսունմէկերորդ տարին։ Աստուած հրամայեց իրեն որ երթայ քարոզէ Հրէից՝ Մեսիային գալուստը, և պատրաստէ զանոնք՝ Քրիստոսի

աստուածային վարդապետութիւնները լսելու։ Գնաց Յովհաննէս Յորդանան գետին քովերը, և սկսաւ խրատել ամենուն որ իրենց մեղքերուն վրայ ապաշխարեն եւ այն իրենց ապաշխարութեանը նշան՝ դան խոստովանին մեղքերնին իւր առջևն ու գետին մէջը մկրտուին՝ այսինքն լուացուին իւր ձեռքովը. «Ապաշխարեցէք, կասէր, զի մերձեալ է արքայութիւն երկնից».

— Եկաւ մօտեցաւ այն ժամանակը՝ յորում Աստուծոյ թագաւորութիւնը պիտի սկսի երկրիս վրայ Մեսիային քարոզութեամբը. ուստի ապաշխարեցէք։

Հրեայք տեսնելով Յովհաննու Մկրտչի խոստմունքը վարքը,—որ հագուստի տեղ՝ ըղտու մորթ առած էր վրան ու մէջքը կաշիէ գօտի կապած, կերածն ալ մարախ ու վայրի աղաւ մեղուներու շինած մեղրը, — սկսան խումբ խումբ գալը դալ Հրէաստանի ամէն կողմերէն, տուած խրատները մտիկ անել, ու մեղքերնին խոստովանելով մկրտուիլ։ Տեսաւ Մկրտիչն որ հասարակ բարեպաշտ ժողովրդեան հետ մէկտեղ եկեր է նաև իրմէ մկրտուելու նաև

շատ Սադուկեցիներ ու Փարիսեցիներ՝ կեղծաւորութեամբ, և մարդարէաբար դիտնալով նոցա դիտաւորութեան ծռութիւնը, նոցա ինքնահաւան հպարտութիւնն ու չարասրտութիւնը, սաստիկ խօսքերով յանդիմանեց զանոնք ու ասաց. Օձերու զաւակներ, ուսկից սովորեր էք ասելու որ իբր թէ դուք աղատ պիտի մնաք այն Աստուծոյ բարկութենէն որ պիտի գայ հասնի ձեր վրայ։ Նայեցէք որ այսուհետև ձեր ապաշխարութիւնը ձեր վարքովն ու գործովը ցուցընէք, և ոչ թէ միայն այս արտաքին արարողութեամբ։ Մէկդի թողուցէք այդ ձեր ունայն պարծանքը որով կպարծենաք թէ Աբրահամ նահապետին պէս հայր ունիք ձեզի. հաստատցէք որ Աստուած ձեզի ամենեւին կարօտ չէ, այլ կարող է այդ քարերէն Աբրահամու զաւակներ հանել։ Այժմ այնպիսի ժամանակ է որ կացինը ծառերուն տակը պատրաստ կեցած է. որ ծառն որ բարի պտուղ չբերեր՝ իսկոյն կը կտրուի ու կրակը կձգուի։

Ժողովուրդը մարդարէին խօսքերէն դարձի գալով կը հարցընէին իրեն թէ Ուրեմն ինչ պիտի անենք որ բարի պտուղ տուող ծառերուն նման լինիմք։ Յովհաննէս պատասխանեց թէ Բարեգործութեանց մէջ առաջինը ողորմութիւնն է. ուստի ով որ երկու ձեռք հագուստ ունի՝ թող մէկ ձեռքը չունեցողին տայ. նոյնպէս թող անէ աւելի կերակուր ունեցողը։ Զինուորականները ունեւոր չլինելով, և ուրիշներուն պէս ողորմութիւն տալու կարողութիւն չունենալով, հարցուցին Յովհաննու թէ Հապա մեք ինչ անենք որ բարեգործ համարուիմք։ Նա պատասխան տուաւ թէ Նայեցէք որ ամենեին մէկու մը դրկանք չանէք, մէկու մը վրայ ստութեամբ յանցանք չձգէք, և ձեր առած ռոճիկովը գոհ լինիք։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՌ-Арм.ССР

Այնքան հաւնեցան ժողովուրդները Յովհաննու խօսքերուն որ սկսան տարակուսիլ թէ մի գուցէ նա է Քրիստոսը՝ այսինքն Մեսիան՝ որում այն միջոցներուն աւելի կապասէին։ Հասկըցաւ Յովհաննէս նոցա միտքն ու ասաց. Ոչ, ես Քրիստոսը չեմ. ես եկեր եմ զձեզ ջրով մկրտելու՝ ձեր ապաշխարութեանը նշան. բայց իմ ետեւէս եկողը ինձնէ շատ աւելի զօրաւոր է, այնպէս որ ես նորա կօշիկներուն կապերը քակելու կամ կօշիկները վերցընելու անգամ արժանի չեմ. նա պիտի մկրտէ զձեզ Հոգւով սրբով, և անարժանները կրակով։ Նա հեծանոցը՝ այսինքն ցորենը հովի տալու դործիքը ձեռքն առած, իւր կալը պիտի մաքրէ. ցորենը իւր շտեմարանները պիտի ժողվէ պահէ, իսկ յարդը պիտի այրէ չմարելու կրակով։

Նոյն օրերը Քրիստոս Տէրն մեր Գալիլիայի Նազարէթ քաղաքէն եկաւ Յորդանան դետին քովը որ Յովհաննէսէն մկրտուի։ Ճանչցաւ Յովհաննէս զՅիսուս, խոստովանեցաւ նորա դերազանցութիւնն ու աստուածութիւնը, «Ես պէտք է քեզնէ մկրտութիւն առնում, դուն ինծի կուգաս» ասաց Յիսուսի։ Յիսուս պատասխանեց թէ «Այժմ ձայն մի հաներ, այս կերպով պէտք է որ մեք ի գործ դնենք խոնարհութեան՝ հեզութեան և ամենայն առաքինութեան սկզբունքները»։ Հասկըցաւ Յովհաննէս Յիսուսի խօսքին նշանակութիւնը և մկրտեց զինքը։ Յիսուս մկրտուածին պէս ջրէն դուրս եկաւ ու աղօթքի կեցաւ. իսկոյն երկինքը բացուեցաւ, տեսաւ Յովհաննէս և բոլոր ժողովուրդը որ Հոգին սուրբ աղաւնիի կերպանքով իջաւ այն լուսաւոր երկինքէն Յիսուսի վրայ, Հայրն Աստուած ալ վկայեց երկինքէն ահեղ ձայնով մը թէ «Դա է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ»։

Ասնք են ահա Աստուածայայտնութեան տօնիս մեծամեծ խորհուրդները, և ասոնք կրացատրէ Եկեղեցին իւր շքեղ հանդէսներովն ու կարդացմունքներովը։

Հանդէսներուն առաջինը այս է որ նախընթաց օրէն նախատօնակ անելով՝ Ճրագալոյց կկատարէ, այսինքն երեկոյեան ժամուն պատարագ կմատուցանէ, և հրաման կուտայ հաւատացելոց որ ի նշան հոգեւոր ուրախութեան՝ լուծեն ութօրեայ չօրակերութիւնն ու պահքը,



և յետ սրբոյ պատարագին խրատ անեն՝ հաւկթեղէն ու ձկնեղէն ճաշակելով ըստ նախնի սովորութեան շատ քրիստոնէից, և ըստ օրինակին Ճրագալուցի սրբոյ Զատկին։

Երկրորդ հանդէսն այս է որ Աստուածայայտնութեան տօնիս առաւօտեան ժամերգութեան առենը՝ Փառք ի բարձունսէն առաջ Ծննդեան աւետարանը կկարդացուի բեմին վրայ, և երբ այն տեղը կհասնի որ կասէ թէ հրեշտակաց բազմութիւնը սկսաւ երգել, «Փառք ի բար-

ձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», դպիրներն ու բոլոր հաւատացեալ ժողովուրդը կշարունակեն երգը այն խօսքերով՝ որ աւանդութիւն է թէ սրբոյ առաքելոյ շարադրածն է. «Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս. օրհնեալ ես Տէր Աստուած մեր, օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ» և այլն։

Երրորդ հանդէսն է Ջրօրհնէքը, այսինքն Քրիստոսի Տեառն մերոյ Մկրտութեան յիշատակը, որ կկատարուի այսօրուան սուրբ պատարագէն ետքը՝ խորհրդաւոր շարականներով, ընթերցուածներով, աւետարանով, ջուր օրհնելով՝ ի նշան Յորդանանու, Խաչը ջուրը ձգելով՝ ի նշան Մկրտութեան Քրիստոսի, եւ սուրբ Մեռոնը կաթեցընելով ջրին վրայ՝ ի նշան իջանելոյ Հոգւոյն սրբոյ աղաւնոյ կերպարանքով՝ Յիսուսի վրայ։

Այս ամենայն գեղեցիկ հանդէսներուն մէջ և բոլոր այս ութօրէից միջոցին երգուած շարականներն ու սաղմոսները աքանչելի իմաստներով և հոգելից խօսքերով հիւսուած են, որոց թարգմանութիւնն ու բացատրութիւնը կարելի չէ համառօտիւ յառաջ բերել։ Բաւական համարիմք միայն այս առաջին աւուր շարականներէն մէկ քանին յիշատակել՝ տուն առ տուն բացատրելով։

«Խորհուրդ մեծ եւ սքանչելի
Որ յայսմ աւուր յայտնեցաւ.
Հովիւին երգեն ընդ հրեշտակս,
Տան աւետիս աշխարհի։»

—Այս ինչ մեծ ու հրաշալի խորհուրդ է որ այս օրուան օրս յայտնուեցաւ. անոր համար հովիւները հրեշտակաց

հետ ի միասին զԱստուած փառաբանելով՝ բոլոր աշխարհիս աւետիս կուտան այս խօսքերով.

«Ծնաւ նոր արքայ
Ի Բեթղեհէմ քաղաքի.
Որդիք մարդկան, օրհնեցէք,
Զի վասն մեր մարմնացաւ»։

—Նոր թագաւոր մը ծնաւ Բեթղեհէմ քաղաքին մէջ. ով որդիք մարդկան, օրհնեցէք ու գովեցէք զինքը, վասն զի մեզի համար մարդկային մարմին առաւ։

«Անբաւելին երկնի եւ երկրի
Ի խանձարուրս պատեցաւ.
Ոչ մեկնելով ի Հօրէ
Ի սուրբ այրին բազմեցաւ»։

—Նա որ բոլոր երկնքին ու երկրիս մէջ չբովանդակուիր իբրև Աստուած՝ խանձարուրքի մէջ պատեցաւ իբրև մարդ. Հօր Աստուծոյ քովէն չշատուելով ամենևին՝ իբրև Աստուած, նա ինքն սուրբ այրին մէջ բազմեցաւ մարդկային մարմնովը։

«Այսօր ցնծան երկինք ի վերուստ մեծապայծառ աւետեօք, եւ արարածք ամենայն զգեցան հանդերձ փրկութեան». —Այսօր վերէն բոլոր երկինքը մեծ ցնծութեան մէջ է՝ աւետաւոր ձայներով, եւ բոլոր բանական արարածները աղատութեան եւ ուրախութեան հագուստներով զարդարուեցան։

«Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս Որդին Աստու-

ծոյ, և հրեղինաց բազմութիւնքն յերկնից յերկիր վայրիջեալ։ — Այսօր այրին մէջ ընծաներ ընդունեցաւ մանկերէն Որդին Աստուծոյ Քրիստոս, և հրեղէն զօրաց անթիւ բազմութիւնը երկնքէն երկիր իջան։

«Այսօր հովուացքն տեսեալ զարդարութեան արեգակն, և ընդ հրեշտակս երգէին, Փառք ի բարձունս Աստուծոյ»։ — Այսօր հովիւները տեսնելով զՔրիստոս որ արդարութեան արևն է, հրեշտակներուն հետ մէկտեղ կերգէին, Փառք ի բարձունս Աստուծոյ։

«Ծնար ի կուսէ անճառ միութիւն. անբաժանելի և միշտ գոլով՝ ոչ մեկնեցար ի հայրական ծոցոյ. զքեզ օրհնեմք Աստուած հարցն մերոյ»։ — Թէպէտ Սուրբ Կուսէն ծնար մարմնով, բայց քու անճառելի միութիւնդ՝ աստուածութիւնդ՝ չբաժնուած մնաց, ինչպէս որ անբաժանելի էր ի յաւիտենից, և դու Հօր Աստուծոյ գրկէն չհեռացար մարդանալովդ, զքեզ կօրհնեմք՝ որ մեր հարցը Աստուածն ես։

«Ուրախ լեր՝ Աստուածածին, յոյս և փրկութեան մայր. զքեզ, ընդունող լուսոյ, մեծացուցանեմք»։ — Ողջոյն ընդ քեզ՝ սուրբ Աստուածամայր, յոյս մեր և մայր Փրկչին մերոյ. ով ընդունարան անճառելի լուսոյն, զքեզ ամէնքս կբարեբանեմք։

«Զ'ի Կուսէն մարմնացեալ Բանն՝ եկայք ժողովուրդք՝ ընդ հովիւսն բարեբանեսցուք, և ընդ մոգուցն երկրպագեսցուք. ընդ երկնային զօրսն երգեսցուք, Փառք ի բարձունս Աստուծոյ»։ — Եկէք, ով հաւատացեալ ժողովուրդք, հովիւներուն հետ օրհնեմք ու փառաբանեմք զԲանն Աստուած որ մարմին առաւ ի Սուրբ Կուսէն, և մոգերուն հետ ի միասին երկրպագութիւն ընեմք

իրեն. երկնային զօրաց՝ այսինքն հրեշտակաց հետ ալ երգեմք՝ Փառք ի բարձունս Աստուծոյ։

Այսպիսի յորդորական, աւետաւոր, ցնծալից և խրատական խօսքերով կկատարէ այսօր սուրբ Եկեղեցին Աստուածայայտնութեան տօնը, Քրիստոսասէր ունկընդիրք, և կցանկայ որ երջանիկ հովուաց անմեղութեամբ ու խոնարհութեամբը, երանելի մոգերուն հաւատովն ու ջերմեռանդութեամբը, եւ սրբոց հրեշտակաց փառաբանական խօսքերովը տօնեմք մեք այս հրաշափառ տօնը։ Բայց ասոնցմէ աւելի ալ օգտակար կճանչնայ մեզի այս խրատը՝ որ բաւական չհամարիմք ուրախական ջերմեռանդութիւնները, այլ ջանամք հետևիլ այն աքանչելի առաքինութեանց՝ որոց օրինակը անձամբ կուտայ մեզի այսօր Տէրն մեր իւր հանգչած մսուրին մէջէն։

Այս առաքինութեանց առաջինն ու գլխաւորը խոնարհութիւնն է. այնպիսի խոնարհութիւն՝ որոյ առջև ամենայն հպարտութիւն մարդկային պէտք է հալածուի ու ոչնչանայ։ Վասն զի եթէ Աստուած, արարիչն երկնի և երկրի, հաճեցաւ անզօր և տկար տղու մը կերպարանքով ծնանիլ յաղքատիկ մօրէ անշուք դռմի մէջ, ու մսուրի մը մէջ չոր խոտի վրայ պառկիլ, ո՞ր մարդը՝ ո՞ր քրիստոնեան կհամարձակի աշխարհիս անոտի մեծութիւնները վնտռել, աշխարհիս անցաւոր հարստութեանցը հետևէն ընկնիլ, վայրկենական փափկութիւններու ցանկալ, և եթէ ձեռք ձգէ՝ անոնցմով հպարտանալ, և իրմէ փոքրերուն վրայ բռնանալ, դառոդանալ։ Կամ՝ ո՞ր աղքատ քրիստոնեան տեսնելով այսօր զՏէրն տերտնց այնպիսի աղքատութեան ու խոնարհութեան մէջ՝ ինքն ալ չխոնարհիր, չմեղմանար, չյորդորուիր սիրով և

ուրախութեամբ համբերելու իւր քաշած խեղճութիւն-
ներուն։

Նոյն աստուածային խոնարհութեան մէկ մեծ օրինակն
ալ տուաւ մեզի Տէրն մեր այսօր իւր Մկրտութեամբ
բը, որ ուրիշ ապաշխարող մարդկանց պէս դնաց իւր
ծառայէն մկրտութիւն ընդունելու։ Ո՞ւր կմնան ուրեմն
այն փառամոլ և անձնասէր անձինքն որ ամէն բանի
մէջ կկրանան ուրիշ ամէն մարդիկներէ վեր երևնալ, թէ-
պէտ և դուցէ իրենք շատ կողմանէ շատերէն վար են ու
անարդ՝ իրենց մեծամեծ պակասութիւններովը։

Բայց մեք վերջացընենք այսօրուան լսարանը՝ քանի մը
խօսք ալ ասելով Բեթղեհեմի և Յորդանանու վրայ, որ
այսօրուան ոտնից մեծ ուխտատեղիներն են։

Երուսաղեմէն եաքը իրաւ որ քրիստոնէից համար
ամենէն ցանկալի ուխտատեղին Բեթղեհէմ քաղաքն է։
Հոն ծնած է Դաւիթ մարգարէն, անոր համար քաղաք
Դաւթի ալ կասուի. բայց անհամեմատ առաւելութեամբ
մեծ է Բեթղեհեմի փառքը ասով որ հոն ծնաւ Աստուածն
Դաւթի, Բանն մարմնացեալ ի Կուսէն։ Երուսաղեմէն
հեռաւորութիւնը վեց մղոնի չափ է. քարոտ
ըլուրի մը վրայ շինած՝ ատենով ամուր բերդաքաղաք էր,
իսկ այժմ գիւղի նման բան մի մնացեր է՝ մանր քառա-
կուսի տներով ու աղքատիկ բնակիչներով։ Բեթղեհեմի
նշանաւոր շէնքը այժմ վանքն է՝ բերդի նման շինած,
որ երեք մաս բաժնուած է. նոյնպէս երեք կարգ բաժ-
նուած կհամարուի նաև եկեղեցին. ասոնցմէ մէկը Յու-
նաց ձեռքն է, մէկը Հայոց, և մէկը Լատինացւոց։

Բեթղեհեմի եկեղեցին շինուած է Քրիստոսի Տեառն
մերոյ ծնած այրին վրայ։ Կպատմեն թէ Աղրիանոս
կռապաշտ կայսրը ուզելով անարգել այն սուրբ այրը,

բագին մը կանգներ էր վրան ու Աղոնիս կուռքին ար-
ձանը դրեր էր, որ հեթանոսները պաշտեն. բայց անկից
երկու հարիւր տարիի չափ եաքը Հեղինէ թագուհին,
որ Մեծին Կոստանդիանոսի մայրն էր, այն կուռքը և
բագինը կործանեց, ու տեղը հայակապ եկեղեցի մը շի-
նեց՝ որ մինչև ցայժմ կեցած է, թէպէտ և շատ անգամ
նորոգուած։ Քառասունութը հատ մեծամեծ սիւներ
կան մէջը՝ միակտուր դեղին մարմարիոնէ, ամէն մէկուն
բարձրութիւնը տասնըութը ոտնաչափ, և շատ մը պա-
տուական միւսիոններ ու քաշուածքներ՝ հանդերձ զա-
նազան հարուստ զարդարանքներով։ Եկեղեցւոյն մէկ
կողմէն սանդուղներով կիջնան Քրիստոսի Ծննդեան
այրը, որ զատ մատուռ մի է անկանոն ձևով՝ բայց գե-
ղեցիկ ու զարդարուն։ Այս այրը դրսէն լոյս առնելու
տեղ չունենալով, դիշեր ցորեկ կվառին մէջը բազմաթիւ
կանթեղներ՝ որ Եւրոպացի թագաւորաց յուղարկած
յիշատակներ են, ինչպէս նաև մէջի ոսկեթել վարա-
գոյրները և ընտիր պատկերները։ Յիսուսի Փրկչին մե-
րոյ ծնած տեղը ազնիւ մարմարիոն մը դրուած է ճեր-
մակ, մէջտեղը յասպիս (եշիմ) քարով ու ճառա-
գայթներով արևի նման ձևացուցած, անոր վրայ գրը-
ուած է Լատիներէն այսպէս։

Աստ ի Կուսէն Մարիամայ
Ծնաւ Յիսուս Քրիստոս.

Այրին պատերը, նմանապէս յատակը, մարմարիոն
քարով պատած են։ Մատրան հարաւային կողմը՝ քիչ

մը պատին մէջ ներսով ու խորունկ՝ Մուրին տեղն է, և հոն ալ միշտ երեք կանթեղ կվառի։

Գամք Յորդանան գետին։

Այս հռչակաւոր գետը, որ Յեսուայ ժամանակը սապանակին գօրութեամբը երկու բաժնուեցաւ Երիքովի մօտ, Իսրայէլացւոց ճամբայ տուաւ Աւետեայ երկիրը մտնելու, յետոյ Եղիա ու Եղիսէ մարգարէներուն ալ հնազանդեցաւ ու Եղիայի մաշկեկովը բաժնուեցաւ երկուքի, Յիսուսի Մկրտութեամբը նախանձելի աւազան եղաւ սրբութեան ամենայն հաւատացելոց։ Կրկին Աներ Լիբանանու ասուած լեռներէն, ու կիթափի Մեռեալ ծովը, և Հրէաստանի ամենէն մեծ գետն է։ Երկու եղերքը այնպէս դալարագեղ ու ծառերով ծաղկներով զարդարուած է որ բոլոր Հրէաստանի մէջ այժմու ժամանակս Յորդանանու հովտին պէս գեղեցիկ ու բարեբեր տեղ չկայ։

Քրիստոնեայ ուխտաւորները մեծ ջերմեռանդութեամբ կլուացուին Յորդանան գետին մէջ, և ոմանք այն պատանքի լաթովը ջուրը կմտնեն՝ որով որ իրենց մեռնելէն ետքը կուզեն պատրնքուիլ ու այնպէս թաղուիլ։

Մեք երանի տամք այն քրիստոնէից և նոցա ամենեցուն որ եթէ բուն և նիւթական Յորդանանին ուխտի չեն կրնար երթալ, այսօրուան Ջրօրհնէքին ներկայ գըտնուին ջերմեռանդութեամբ, և Տարականին այս սրտառուչ խօսքը կասեն. «Սրբեա, Տէր, զմեղուցեալ քոց ծառայից զգայարանս, և շնորհեա տեսանել զքեզ, և լսել զհայրական զձայնն՝ եթէ Դա է որդի իմ սիրելի»։ —

Ո՛վ Տէր, սրբէ մաքրէ քու մեղաւոր ծառաներուդ զգայարանքները, և այս մեծ շնորհքը ըրէ մեզի որ տեսնեմք զքեզ և լսեմք Հօր Աստուծոյ գորովական ձայնը թէ Դա է իմ սիրելի որդիս։ Նմա փառք և գոհութիւն հանդերձ Որդւովն և Սմենասուրբ Հոգւով այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUR-Арм.ССР

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ

Աւազ Երկուշաբթի .
Աւազ Երեքշաբթի .
Աւազ Չորեքշաբթի .
Երուսաղէմի առումն ու տաճարին կործանումը .
Կոստանդնուպօլսոյ առումն յՕսմանեանց .
Աւազ Հինգշաբթի .
Աւազ ուրբաթ .
Զատիկ սուրբ Յարուրեան Տեառն .
Սուրբ Հռիփսիմեանք .
Համբարձումն .
Հոգեգալուստ .
Վարդավառ .
Վերափոխումն .
Սուրբ Խաչ .
Ծնունդ եւ Յայտնութիւն Տեառն .

ՊԱՏՐԱՍՏ ԻՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Տեառնընդառաջ .
Բուն Բարեկենդան .
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ .
Որդիք եւ բոռունք սրբոյ Լուսաւորչին .
Մեծն Ներսէս Պարթեւ .
Սուրբ Սարգիս զօրավար .
Սուրբ Մինաս .
Սուրբ Անտոն ճգնաւոր .
Յոր երանելի .
Թադէոս առաքեալ, Ս. Սանդուխտ կոյս եւ Ս. Շուշանիկ.
Ժամ եւ Ժամերգութիւն .

Երկինք .
Արեւն ու Մոլորակները .
Ջերմութիւն եւ Ջերմաչափ .
Մետեորագիտութիւն , կամ Գուշակութիւնք օդոց .
Մրջիւնք ու Մեղուք .
Տնտեսութիւն .
Եգիպտոսի հնութիւնները . եւ այլն :

Գիրք Տեսակիս Հայոց